«ՀԱՅ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (1794—1920)»։ Կազմողներ՝ Լ. Գ. Մուրադյան, Ն. Վ. Անանյան։ *ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1987, 758 էջ։*

Մատենագիտական հրատարակությունների անհրաժեշտությունը ծագել է գիտությունների զարգացման գործնական խնդիրներից։ Ամենասկզբում այդպիսի հրատարակությունները հավանարար սոսկ տեղեկատու դեր են կատարել, մի բան, որ այսօր էլ հիմնականն է մատենագիտության որոշ տեսակների համար։ Սակայն գիտության առջև ծառացած նոր խնդիրները, տարբեր ճյուղերի ու բնագավառների նեղ մասնագիտացումը, օրեցօր աճող ինֆորմացիայի վիթխարի հոսքերը նոր պահանջներ են թելադրում մատենագիտական հրատարակություններին, փոխում են վերջիններիս բնույթն ու բուն բովանդակությունը։ Արդյունքը եղել է այն, որ մատենագիտությունն ինքը դարձել է գիտության յուրահատուկ բնագավառ, դիսցիպլին՝ իր առարկայով, տեսական սկզբունքներով ու մեթոդաբանությամբ։ Դրա լավագույն վկայությունը ինֆորմացիայի կենտրոնների լայն ցանցն է, որ այսօր ստեղծվել է աշխարհում, ինչպես նաև այդ կենտրոնների իրավական հավասարեցումը գիտական կազմակերպությունների հետ։ Այդպիսի կենտրոն այժմ գործում է նաև Հայաստանում՝ գիտությունների ակադեմիայի համակարգում և, կարելի է վստահորեն ասել, կատարում է հասարակագիտական ինֆորմացիայի զարգացման շատ կարևոր դերը։ Յուրօրինակ մատենագիտական կենտրոններ են դարձել նաև հանրապետության խոշորագույն՝ Ալ. Մյասնիկյանի անվան հանրային և գիտությունների ակադեմիայի ֆունդամենտալ գրադարանները։ Այս կենտրոններում, հենվելով մեր մշակույթի պատմության մեջ բավականին հարուստ մատենագիտական ավանդույթների վրա, այդ գործը բարձրացել է մասնագիտական ու գործնական նոր մակարդակի։ Մատենագիտական աշխատանքներ են կատարվում նաև այլ գիտական հիմնարկներում։

Ժամանակակից մատենագիտության, իբրև մշակութային գործունեության հատուկ բնագավառի, բնորոշ գծերից մեկն այն է, որ քանակական աճին զուգընթաց՝ նրա ներսում կատարվում են տեսակային նորանոր ստորաբաժանումներ։ Ընդհանուր բնույթի մատենագիտական հրատարակությունների կողքին, ինչպիսիք են, օրինակ, ամենից ավելի տարածված՝ պարբերական հրատարակությունների մատենագիտությունները, հրապարակ են գալիս ավելի նեղ մասնագիտական բնույթի մատենագիտական ձեռնարկներ, որոնց զուտ գիտական և ընդհանուր մշակութային նշանակությունը դժվար է գերազնահատել։ Այս վերջին տեսակից է նաև գրախոսվող մատենագիտությունը, որ իրականացվել է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում՝ Լ. Գ. Մուրադյանի և Ն. Վ. Անանյանի աշխատասիրությամբ, հայ նոր գրականության բաժնի մի խումբ աշխատակիցների մասնակցությամբ։ Գիրքը հրատարակության են երաշխավորել բանասիրական գիտությունների թեկնածուներ Ս. Ա. Շտիկյանը և Թ. Ա. Խաչատրյանը։ Պատասխանատու խմբագիրն է վաստակաշատ մատենագետ Հ. Մ. Դավթյանը։

Մատենագիտությունն ունի հատուկ առաջաբան, ուր ներկայացվում են գրքի նպատակն ու սկզբունքները, բնույթն ու նշանակությունը։

Գրախոսվող մատենագիտության գլխավոր առանձնահատկություններից մեկն այն է, որ իր բնույթով մոտենում է գիտական ուսումնասիրությանը։ Եվ ամենից առաջ՝ թեկուզ հենց նրանով, որ յուրովի օգտագործում և ընդհանրացնում է հայ մատենագիտության փորձը։

Այս տեսակետից, անշուշտ, պատահական չէ, որ առաջաբանում համառոտակի ներկայացվում է հայ մատենագիտության անցած ուղին և ժամանակակից վիճակը։ Հայ իրականության մեջ մատենագիտության պատմության սկիզբը իրավացիորեն համարվում է Վենետիկի Մխիթարյանների բեղմնավոր գործունեությունը։ Պատշաճ գնահատական է տրվում անվանի մատենագետ Գ. Լևոնյանի և ապա Հովհ. Պետրոսյանի մատենագիտական աշխատություններին, որոնք, իրոք, նշանակալից գեր են կատարել մեզանում՝ մատենագիտական գործի զարգացման բնագավառում։ Նշվում է Հ. Անասյանի, Ռ. Իշխանյանի, Հ. Դավթյանի, Ս. Շտիկյանի «ծանրակշիռ ավանդը» հայ մատենագիտության մեջ։ Այս ամենը խոսում է գրախոսվող մատենագիտությունը կազմողների գիտական բարեխղճության, եղած փորձի ըստ ամենայնի ուսումնասիրության և օգտագործման մասին։

Ինչպես ցույց են տալիս խորագրում նշված ժամանակագրական սահմանները, մատենագիտությունն ընդգրկում է այն ավելի քան հարյուրամյա հատվածը, որն ընդունված պարբերացմամբ, կազմում է հայ գրականության պատմության նոր շրջանը։ Դա նաև գրական քննադատության ծագման և, իբրև հոգևոր կեցության ինքնուրույն ոլորտ, ձևավորման ու զարգացման շրջանն է։ Այդ ժամանակաընթացքում հայ քննադատության հիմնական հանգրվանը եղել է պարբերական մամուլը։ Դրանում դրսևորվել է քննադատության՝ գրական կյանքի այդ ամենաշարժուն ծանրաչափի առանձնահատկությունը ընդհանրապես և մասնավորապես՝ հայկական միջավայրի յուրահատուկ բնույթ։ Իսկ եթե նկատի ունենանք, որ հայ մամուլի կենտրոնները ցրված են եղել աշխարհով մեկ, այժմ էլ հայ պարբերականների շատ հավաքածուներ պահվում են բազմաթիվ, միմյանցից հեռու գաղթավայրերում և մատչելի են ոչ բոլորին, հեշտ կլինի պատկերացնել, թե ինչպիսի դժվարությունների կարող է բախվել հայ քննադատության պատմության և առհասարակ մամուլի հետ կապված այլ բնագավառների հետազոտողը։ Գրախոսվող մատենագիտության ամենաառաջին գործնական նշանակությունն այն է, որ անհամեմատ թեթևացնում է հայ քննադատության պատմությամբ զբաղվողների գործը։

Կատարված աշխատանքի ծավալի ու հաղթահարված դժվարությունների մասին գաղափար կազմելու համար բավական է հիշել, որ կազմողները թերթել ու մանրամասն ուսումնասիրել են 220 անուն պարբերական։ Ասում ենք ուսումնասիրել, քանի որ, իրոք, տվյալ դեպքում հատուկ պատրաստվածություն և մասնագիտական իմացություն է պետք՝ առանձնացնելու համար հատկապես այն նյութերը, որոնք վերաբերում են քննադատությանը։ Ճյուղային մատենագիտություններ կազմելիս հավանաբար զուտ մատենագիտական հմտությունն ու փորձը քիչ են. անհրաժեշտ է, որ կազմողը լինի նաև տվյալ բնագավառի որակյալ մասնագետ։ Այդ երկու նախադրյալների համատեղությունն էլ հենց պայմանավորել է գրախոսվող մատենագիտության հաջողությունը։

Մատենագիտության մեջ պարբերականները դասավորված են ժամանակագրական հաջորդականությամբ։ Դա կազմողների համար միայն ձևական նպատակահարմարության խնդիր չի եղել, այլ կատարվել է ավելի սկզբունքային նկատառումով։

Նախ՝ ինչպես նշվում է նաև առաջաբանում, մատենագիտության նպատակը միայն փաստական տվյալների հաղորդումը չէ. կազմողներն իրենց առջև խնդիր են դրել այդ տվյալների նպատակային հետևողականությամբ ուրվագծել հայ քննադատական մտքի շարժման ընթացքը՝ XVIII դ. վերջից մինչև XX դ. սկիզբը։ Պարբերական առ պարբերական հետևելով այդ ընթացքին՝ ուսումնասիրողը կարող է պարզել, թե տարբեր շրջաններում ինչպիսի հարցեր են հուզել հայ քննադատական միտքը, ինչ թևմաներով է զբաղված եղել այն, ինչ սկզբունքներով է ղեկավարվել։ Դա հուշում է նաև բուն գրականության զարգացման օղակների հետևողականությունը, ծանոթացնում է հասարակական մտքի առաջընթացին։ Բնական է, որ այսպիսի նպատակի հասնելու համար քիչ կլիներ տվյալների մեխանիկական արձանագրությունը։ Կազմողները գիտակցել են դա և իրենց նյութին վերաբերվել են ընտրողական սկզբունքով։

Պարբերականների ժամանակագրական դասավորությունը պայմանավորել է նաև զարգացման տարբեր շրջաններում նյութերի ընտրության, մշակման ու մատուցման տարբեր սկզբունքները։ Դա առանձնապես ակնհայտ է դառնում, երբ համեմատում ենք մատենագիտության սկզբնամասի և վերջնամասի էջերը։ Հայտնի է, որ ինչպես առհասարակ, այնպես էլ հայ մշակույթի պատմության մեջ գրական քննադատության վերջնական ինքնորոշումը միանգամից չի կատարվել. սկզբնական շրջանում այն անբաժան է եղել բանասիրությունից, ապա նաև՝ հրապարակախոսությունից։ Ահա թե ինչու վաղ շրջանի պարբերականներից կազմողները վերցնում են ոչ միայն զուտ քննադատական, այլև բանասիրական ու հրապարակախոսական հոդվածները, որոնք այս կամ այն չափով առնչվում են ընթացիկ գրականության հետ։ Ավելի ուշ շրջանի, մասնավորապես XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբի պարբերականներից նյութերի ընտրությունը կատարվում է արդեն որոշակի սկզբունքով՝ մշակութային ինֆորմացիայի ընդհանուր հոսքից առանձնացնելով զուտ քննադատության բնագավառին վերաբերող հոդվածները։ Մատենագիտության այդպիսի կառուցվածքը ընթերցողին ևս ներշնչում է տարբերակված հայացքով դիտել հայ քննադատության զարգացման պատմությունը։

Հոդվածները ներկայացվում են մատենագիտական հրատարակություններում ընդունված եղանակով. տրվում է հեղինակը (եթե հոդվածը ստորագրված է), պարբերականի այն բաժնի խորագիրը (եթե նշված է), որի տակ հրապարակվում է հոդվածը, հոդվածի վերնագիրը, փակագծում՝ հոդվածի նյութն ու անոտացիոն բնութագիրը, պարբերականի թվականը, համարը, ամսաթիվը (եթե՝ օրաթերթ է), էջը (եթե հանդես է)։ Անոտացիաներում, հոդվածների նյութի

ու թեմայի վերտրերյալ հաղորդումներից բացի, հաճախ մեկ բառով, մեկ արտահայտությամբ, տրվում են այնպիսի հուշող բնութագրություններ ու գնահատականներ, որպիսիք հնարավոր են թերևս միայն նեղ մասնագիտական մատենագիտություններում։ Այդ բնութագրումներն ու գնահատականները, իրենց ամբողջության մեջ, ընդհանուր պատկերացում են տալիս բնթերցողին՝ տարբեր շրջաններում քննադատության տեսական ու գործնական վիճակի մասին, մի բան, որ կողմնորոշիչ նշանակություն ունի հատկապես նրանց համար, ովքեր նոր են ծանոթանում տվյալ բնագավառին։

Բոլոր մատենագիտական իմաստով՝ գրախոսվող գրքից կարելի է բխեցնել կարևոր մի դաս։ Գիտության զարգացման ժամանակակից մակարդակը զգալիորեն բարդացրել է նաև մատենագիտական գործը։ Այսօրվա մատենագիտությունը գիտական ուսումնասիրություն է և կազմողից պահանջում է նյութի լուրջ ու բազմակողմանի հետազոտություն։ Սովորական տեղեկագրական ցանկերի փոխարեն նորագույն մատենագիտական հրատարակությունները ներկայացնում են մշակված փաստական տվյալների համակարգեր, որոնք ոչ թե օժանդակ միջոց են գիտական ուսումնասիրությունների համար, այլ հաճախ իրենք են թելադրում այդպիսի հետազոտությունների ուղղությունը։

Այս վերջին առումով ի՞նչ կարող է տալ գրախոսվող մատենագիտությունը հայ քննադատության պատմության ու տեսության հարցերով զբաղվող գրականագետներին. ամենից առաջ՝ այդ պատմության հիմնական փուլերն ու նշանաձողերը, յուրաքանչյուր փուլում գերիշխող դրական խնդիրների ամբողջությունը, փուլից փուլ կեղագիտական պատկերացումների փոփոխություններն ու տեղաշարժերը։ Նույնիսկ նախքան բուն նյութի մեջ խորանալը ուսումնասիրողը կարող է ստանալ նաև համեմատաբար մասնավոր կարգի այլ տեղեկություններ. ասենք՝ ինչպիսի՞ գրական-քննադատական ուղղություն է ունեցել այս կամ այն պարբերականը, ովքե՞ր են եղել ժամանակի առաջատար քննադատները, հայրենի և օտար ի՞նչ ավանդույթների հետ է կապված եղել հայ քննադատությունը իր զարգացման տարբեր շրջաններում և այլն։

Գրախոսվող մատենագիտությունն ունի նաև որոշակի թերություններ՝ պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով. բնականաբար, ամբողջ հայ պարբերական մամուլի համապատասխան նյութը չէր կորող ընդգրկվել մատենագիտության մեջ, ուստի և կազմողները առաջարանում այդ մասին հստակ վերապահում պետք է անեին։ Ոչ քիչ դեպքերում [«Մասիս», «Հայրենիք», «Մեղու», «Ծաղիկ», «Ժամանակ», «Բյուրակն», «Արևմուտք» (Փարիզ) և այլն] բավական թվով քննադատական հոդվածներ դուրս են մնացել մատենագիտությունից, թեև նշված պարբերականների հավաքածուները կան հայրենական դրապահոցներում։ Մատենագիտության մեջ չեն նշվել, օրինակ, Գր. Չիլինկիրյանի «Թատրոն», «Անտրոմագ», «Սպուդ», Ն. Գաղտաղլյանի «Ռոմեո և Ջուլիետ» («Ծաղիկ», 1862, № 19, էջ 149—160, № 25, էջ 201—202, № 28, էջ 233—236, № 29, էջ 241—244), Հաբմայի (Սա. Ոսկանյան) «Դատական», «Պ. Բոնսարին կատակերգությունը» («Արևելք», 1855, № 10, էջ 294—299, 1856, № 13, էջ 403—410), «Կյուրճիներուն վրա գրված վեպ մը», «Լաֆոնթեն և Լամարթին» («Արևմուտք», 1864, № 2, էջ 13—15, № 3, էջ 18—20, № 8, էջ 62), Ալ. Երիցյանի «Խաչատուր Աբովյանի կենսագրության համար նոր նյութեր», Գրիչի «Մանանա» («Փորձ», 1889, № 8—9, էջ 191—198, 1876, № 2, էջ 339—358) և այլ քննադատական հոդվածներ ու գրախոսություններ։

Տողերիս հեղինակը գրքին մասնակցել է «Արևելյան մամուլի» մատենագիտությամբ և իր, մասամբ նաև խմբագրության անփութության հետևանքով բաց է թողել հանդեսի վերջին՝ Մատթեոս Մամուրյանից հետո ընկած շրջանը, որն առանձնապես հարուստ է քննադատական նյութերով։ Վրիպումներ կան պարբերականների հրատարակության տարեթվերի հարցում, որոնք կբացառվեին, եթե կազմողները հետևեին հայ մամուլի վերաբերյալ նոր աշխատություններին։

Մատենագիտությունից օգտվելը դյուրացնելու նպատակով կազմողները վերջում զետեղել են պարբերականների այբբենական ցանկ և անվանացանկ։ Դա, իհարկե, միանգամայն անհրաժեշտ է։ Թեև դժվար, բայց ցանկալի կլիներ կազմել նաև թեմատիկ կամ առարկայական ցանկ, ինչպես նաև մի տեղեկատու այն զրապահոցների մասին, ուր պահվում է այս կամ այն պարբերականի հավաքածուն։

Նշված թերություններն ու բացթողումները չեն նվազեցնում, սակայն, գրախոսվող մատենագիտության գիտական ու գործնական արժեքը։

Վ. Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Թանասիրական գիտությունների թեկնածու